ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ. 596-659, քարտուղարություն, հեռ. 596-125

N 10/5-2-1582 «27» 05 2010 թ.

Ձեր

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարար
պարոն Է. Նալբանդյանին

Հարգելի պարոն նախարար

Ի պատասխան Ձեր 21.05.2010թ. թիվ 16/07514 գրության, հայտնում եմ, որ ՀՀ Ոստիկանությունը, քննարկելով «Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան, նպատակահարմար է գտնում փաստաթղթի ստորագրումը:

Կից Ձեզ է ներկայացվում Կոնվենցիայի ստորագրման նպատակահարմարության մասին տեղեկանքը:

Առդիր՝ «1» էջից:

Հարգանքներով՝

ոստիկանության գեներալ-լեյտենանտ Ա. Սարգսյան

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի
նախարարություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՈՒՏՔ N 12831
27 MAY 2010

ՏԵՂԵԿԱՆՔ

«Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի ստորագրման նպատակահարմարության մասին

Կոնվենցիայի ստորագրումը հնարավորություն կընձեռի՝

-կանխել երեխաների սեռական շահագործումը եւ սեռական բնույթի բռնությունները եւ պայքարել այդ դրսեւորումների դեմ,

-պաշտպանել սեռական շահագործման եւ սեռական բնույթի բռնությունից տուժող երեխաների իրավունքները,

-խթանել պետական եւ միջազգային համագործակցությունը երեխաների շահագործման եւ սեռական բնույթի բռնությունների դեմ պայքարի բնագավառում,

-խրախուսել երեխաների պաշտպանության եւ իրավունքների շուրջ իրազեկության բարձրացումը կրթական, առողջապահական, սոցիալական պաշտպանության, արդարադատության եւ իրավապահ մարմինների՝ երեխաների հետ շփում ունեցողների շրջանում,

-երաշխավորել, որ առաջնային եւ միջնակարգ կրթության ընթացքում երեխաները տեղեկատվություն ստանան սեռական շահագործման եւ սեռական բնույթի բռնությունների ռիսկերի, ինչպես նաեւ պաշտպանվելու միջոցների վերաբերյալ,

- հաստատել արդյունավետ սոցիալական ծրագրեր եւ ստեղծել բազմաբնույթ կառույցներ՝ ապահովելու տուժողների, նրանց հարազատների եւ նրանց խնամքի համար պատասխանատու ցանկացած անձի համար անհրաժեշտ աջակցությունը,

-միջոցառումներ ձեռնարկել՝ խրախուսելու ցանկացած անձի, ով տեղյակ է կամ բարեխղճորեն կասկածում է երեխաների սեռական շահագործման կամ սեռական բնույթի բռնությունների դրսեւորումների մասին, այդ փաստերի մասին զեկուցել իրավասու ծառայություններին,

- միջոցառումներ ձեռնարկել՝ խրախուսելու եւ խթանելու տեղեկատվական ծառայությունների՝հեռախոսային եւ ինտերնետային թեժ գծերի ստեղծումը, որոնք զանգահարողներին կտրամադրեն խորհրդատվություն,

-աջակցել տուժողներին, կարճաժամկետ եւ երկարաժամկետ հիմքերով, վերջինների ֆիզիկական եւ սոցիալ-հոգեբանական վերականգնման ընթացքում՝ հաշվի առնելով երեխայինկարծիքները, կարիքները եւ մտահոգությունները,

-միջոցառումներ ձեռնարկել, ներպետական օրենսդրությանը համապատասխան, տուժողներին աջակցություն ցուցաբերող ոչ կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների եւ քաղաքացիական հասարակության այլ տարրերի հետ համագործակցելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ Ոստիկանությունը նպատակահարմար է գտնում կոնվենցիայի ստորագրումը:

ՀՀ Ոստիկանության պետ,
ոստիկանության գեներալ-լեյտենանտ Ա. Սարգսյան